

Հասմիկ ԳԱԼՈՍՅԱՆ

ՎԱՀՐԱՄԱՔԵՐԴ ԳՅՈՒՂԻ ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ. ՍԱՆԻՆԵՐ

Ժողովրդական երգը ժողովրդական կյանքի պատմությունն է: Հայ երգային բանահյուսության մեջ բազմակողմանիորեն արտացոլվել է հայ մարդու կյանքը: Ծընվում է մարդը, ապրում, մնունում, և երգը միշտ նրա հետ է՝ դաշտում աշխատելիս, սիրո և ուրախության ժամերին, կորուտների և դժբախտությունների օրերին: Բանահյուսական քնարերգությունը (աշխատանքային երգեր, սիրային ու ծիսական երգեր, անեծքներ ու ողբեր, պանդխտության ու օրորոցային երգեր և այլն) ժողովրդական կյանքի աշխարհն է:

Վ. Բրյուսովը “Պօջան Արմենի” աշխատության ներածական ակնարկում գրում է, որ հայ երգային բանահյուսությունը շատ է հիշեցնում ամենաուշ ժամանակի չափածոյի տեխնիկայում հմտացած որևէ բանաստեղծի նրբորեն մտածված ստեղծագործությունները:¹

Հայ ժողովրդի քնարական բանահյուսության կարևոր բաժիններից մեկը ժողովրդական խաղիկներն են: Առաջին լուրջ օրինակը տալիս է Աւոնի Ալիշանը «Հայոց երգը ուամլականը» ժողովածուվ, թեալես այս տեսակ երգերի գրառումը սկսվել է մինչև Ալիշանը: 1904թ. «Արարատ» ամսագրում և ապա առանձին գրքով լույս է տեսնում Մ. Արենյանի «Ժողովրդական խաղեր» հետազոտությունը: Սրանում հայ իրականության մեջ հիմք է դրվում ժողովրդական երգերի բանասիրական-բանագիտական ուսումնասիրությանը.²

Ուսումնասիրության սկզբում անդրադառնալով խաղիկների անվանման հարցին՝ Արենյանը նշում է, որ դրանք ընդիմանուր անունով կոչվում են խաղ, սակայն երբեմն էլ հիշվում են իրեն տաղ: Նա հավաստում է, որ խաղ բառը նշանակում է նաև պար, քանի որ այս խաղիկները սկզբնապես և հետո մեծ մասամբ պարերգեր են եղել:

Խաղիկների բովանդակությունը հարուստ է սիրո հետ կապված իրական կյանքի զանազան դրություններով, գործողություններով, համեմված են ժողովրդական ստվորություններով, կենցաղային գծերով ու բարքերով: Տագումով բոլոր խաղերը «հանպատրաստից, հանկարծական բերմանք» հորինված ստեղծագործություններ են, որ արտահայտել են հորինող երգչի վայրկենապես ծնված, բովեական տպագործությամբ առաջացած զգացմունքը, ինչպես նաև ժամանակի ու միջավայրի բարքերը: Ժողովրդական խաղիկները, ի տարրերություն սիրո երգերի, փոքր ծավալի, գերազանցապես քառատող, լիրիկական երգեր են՝ հորինված հոգեկան տարրեր վիճակների և հասարակական բազմազան երևույթների անմիջական ազդեցությամբ: Ցուուաբանչուր խաղիկ արտահայտում է մի ամբողջական միտք, տրամադրություն, հանգավոր է և գեղարվեստորեն ավարտում:

*Սազեր ունիմ ծիրանի,
Չեմ տա հազար քումանի,
Կուտամ մեր բազրոյանի,
Դմեր սրնդուկն ու տանի:*

*Յայլավորը յայլեն է,
Յարս վերի մայլեն է:
Յայլա տեղը սարին է,
Գլուխը չոր քարին է:*

Շիրակի մարգի Վահրամաքերդ (Ներքին Ղանիջա) գյուղի տարեց ասացողներից զրի ենք առել մոտ հարյուր իհսուն խաղիկներ, որոնք բանասացները կոչում են նաև մանի, խանա, բոլոր պարի երգեր, վիճակի ու ջանցուլումի երգեր:

Ուսումնասիրության նապատակն է որպես հաղորդում ներկայացնել մեր կողմից գրառված մանիները, ժամանակի կորսատից փրկել տվյալ տեղավայրի ազգաբնակչության բանավոր ավանդության մեջ տակալին գոյատևող հարուստ ստեղծագործությունները: Այս խաղիկներն ստեղծվել են միայն մեկ անգամ երգվելու համար, քայլ ժողովրդական բանահյուսության մյուս տեսակների նման այդ երգերը ևս, եթե հաջող են եղել, չեն անհետացել առաջին անգամ երգվելուց կամ իրենց հեղինակի մահից հետո:

¹ Վ. Բրյուսով, Պօջան Արմենի, Մ., 1916, стр. 39.

² Մ. Արենյան, Ժողովրդական խաղիկներ, Եր., 1940, լգ 51, 53, 110:

Խաղիկների գրառման ընթացքում հասովկ ուշադրություն ենք դարձրել, քեզ ասացողը ումից է լսել, սովորել, որտեղից, ինչ ճանապարհով են այդ նյութերը պահպանվել իրենց հուշերում։ Քանաացներից մեկը՝ ուրսունամյա Ռոզա Գևորգյանը, պատմեց. «Օղորմածիկ Արաք մանը, օր Կարմիր Ավետրանի տերն էր, շատ խաներ գիտեր. Զահել հարս ու աղջիկներին կողքը կշարեր, խանա կսեր, մենք էլ կսորվեինք» (ասացողը բնիկ Ղանիշեցի էր)։

Քանաացները (Ավագյան Վեռա, Գևորգյան Ռոզա, Հովհաննիայան Նորիկ (Նուռիկ), Սկրտյան Ցոռիկ)³ այս դեպքում ոչ միայն վերարտադրողներ են, այլև խաղիկների ստեղծման ու ձևավորման գործներացի անմիջական կրողն ու մասնակիցը։ Կատարելով իրենց խև ստեղծած ու մեծերից լսած երգերը՝ ժողովրդական հորինողները, հաճախ ոչ գիտակցաբար, ստեղծագործություններից դուրս են նղում սյուժետային, լեզվածական զանազան թերություններ և այլ կարգի անկատարելություններ։

Մանի լսեմ ու շարեմ, Սովորի վրի գիմին, Կոամեսով խաղցընեմ,
Տոպրակ լցնեմ ու կարեմ, Ապրի քեզի պես քենին, Չորովին (էլ)՝ կիախցընեմ:
Քաղքե քաղաք մամ տամ,
Մրտիս ուզած ճարեմ։

Վահրամաբերդում, ընդհանրապես Ծիրակում, ընդունված է եղել հարսանիքին նախորդող ինմաշաբթի օրը հարսնացուի հարազատներից մեկի տունը հայտարարել «պարտուն» (պարատուն)։ Հավաքվում էին զյուղի երիտասարդները, ներկա էր նվազախումը։ Երիտասարդները բաժանվում էին երկու խմբի, և «պարը բոլորում էր»։ Առաջին խումքը տեղում հորինում էր մանիներ, մյուսն էլ՝ պատասխանում դրանց։ Այս մանիները իմանականում կրում էին կատակի, հումորի բնույթ, ամենատարածվածը յարի գովքն էր, արտաքին ու ներքին գեղեցկությունների նկարագրությունը։

<i>առաջին խումք</i>	<i>երկրորդ խումք</i>
<i>Մատմիքս մատովս չէ,</i>	<i>Ծերմակ ծաղիկ սկսվամ,</i>
<i>Միրել եմ, սրտովս չէ։</i>	<i>Ես ու յարս սեյրի քան։</i>
<i>Կայմել ես՝ կաք նմանիս,</i>	<i>Ես դուշ եմ՝ թևս դեղին,</i>
<i>Բացվել ես՝ վարդ նմանիս։</i>	<i>Սան գուկամ յարիս գեղին։</i>
<i>Ճրագ էրեք, լուս էրեք,</i>	<i>Պարրաշի՛, պարիդ աշե,</i>
<i>Ջիաղցողիմ դուս էրեք։</i>	<i>Ես դաշի՛ յարիդ աշե։</i>
<i>Կարմրնջի քարը փուխ է,</i>	<i>Կարմրնջի քարը չալ-չալ,</i>
<i>Յարիս աչքերը քոխ է։</i>	<i>Յարիս աչքերը չախալ։</i>

Այսպիսի պարտները գյուղում կազմակերպվել են 1930-ականներից և գոյություն են ունեցել մինչև 1988 թ. երկրաշարժը։

Ներկայացվող խաղիկները նախապատերազմյան շրջանի հոգսաշատ ու արտաքին աշխարհին անհարորդ զյուղական երիտասարդության հուզաշխարհի և հոգեկան ընդվզումների արդյունք են, նրանց ցանկությունների ու երազանքների արտահայտությունը։ Առօրյա դժվարություններից կտրվելու միջոցը երգն ու պարն էր։

Տարեց կանանց ներկայությունը պարտներում երեք նշանակություն ուներ. 1. զալիս էին աղջիկ ընտրելու իրենց տղաների համար, 2. սովորեցնում էին պարեր, 3. սովորեցնում էին մանիներ։

³ Ռոզա Սեղրակի Գևորգյան, ծնվել է 1927 թ. փետրվարի 18-ին, Ծիրակի մարզի Ներքին Ղամլջա (Վահրամաբերդ) գյուղում, Սուշի Ռ-ուստամ Գևորգի գյուղից գաղթած Սեղրակ Սամուկյանի ընտանիքում։ Երգերու շնորհը ժառանգել է հորից։ Հայրը լավ ճայն է ունեցել, երգել է քուրեններ, իմանականում աշուղ Ղարիի եերիաթներ։

Նորիկ (Նուռիկ) Սուշեղի Հովհաննիայան, ծնվել է 1933 թ., Ծիրակի մարզի Վահրամաբերդ գյուղում։ Բնիկ Ներքին Ղամլջացի հորից՝ վարպետ Սուշեղից ժառանգել է երգելու ընդունակությունը։

Վեռա Սմբատի Հարությունյան, ծնվել է 1929 թ., Ծիրակի մարզի Դուզցանդ (Այսուրյան) գյուղում։ Երգելու շնորհը ժառանգել է տրակտորիստ հորից։ Խաղիկների մեծ մասը նա սովորել է Վահրամաբերդում։

Ավագ սերնդի փորձված ներկայացուցիչները ստուգում էին խաղիկների կատարումը և ուղղություններ տալիս: Չատ ջերմ ու անկեղծ էին զյուղի երիտասարդների փոխհարաբերությունները: Դրանք ավելի հստակորեն դրսևորվում էին ուրախությունների ժամանակ և հատկապես աշխատանքի մեջ: Որոշ խաղիկներում աղջիկներն իրենց սիրահետող տղաների հետ հումորով երկխոսության մեջ են մտնում:

Հերիք խոսաս ըծերեն,
Կլրմանիս քոռ մկներեն:

Հերիք խոսաս զյավազ,
Լոզրդ բերենեղ կվազա:

Հերիք խոսաս, հեր ունիս,
Ամեն մազիս տեր ունիս:

Զերիս բերանը պոտ-պուտ,
Տղոնցը կանչեմ կուտ-կուտ:

Ելա երդիկ՝ խոտ թափի,
Քեզ մեն խնձորով խարի:

Տղա՛, արի՛ քան ըսեմ,
Քյամքյուղ օսկուց հուսեմ:

Չատ մանիներ ունեն առած-ասացվածքային բնույթ, որոնք մինչև հիմա օգտագործվում են առօրյա-խոսակցական լեզվում, բայց ոչ որպես խաղիկ:

Տեզրն օր հարսին ուզե,
Ժամացոյցը կղզե:

Օսկին ի՞նչ է, մանդրու է,
Բանձը օր զինը ծանդրու է:

Աղջիկն օր մորեն կեղնի (կծնվի),
Տվեք զլխուն քող մեռնի,

Տղեն օր մորեն կեղնի,
Թող երկան արև էղնի:

Աղրուր քիսավ՝ ջուրն անուշ,
Ախաղոր պայած քուրն անուշ:

Ստեղծվել են մի շաբթ մանիներ, որտեղ հստակորեն արտահայտված են սերն ու հավատն «առ Ավետարան» (Վահրամաքերդում են տարիներ շարունակ պահվել «Կարմիր Ավետարան», «Ծեկ Ավետարան», և մինչև օրս էլ պահվում են «Նարեկ», «Ճաշոց զիրք» սուրբ զքերը):

Արև դրավ գերանին,
Մեռնիմ ավետըրանին,

Սազերս հուսի, ոխս էրի,
Աշաղըրտանց ջուխս էրի:

Ավետըրան ոխս էրի,
Մրտիս ուզածը ճարի:

Քիչ չեն նաև զինվոր բալին, զինվոր յարին նվիրված մանիները, որոնք ստեղծվել են բացառապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Զրի ավազին մեռնիմ,
Գինու կարասին մեռնիմ,
Բանակ գնացող յար ջան,
Մրտիս մուրազին մեռնիմ:

Յար ջան, արի՛, մի՛ գնա,
Դույնեն մեզի չի մնա,
Դույնի մալր մալ չեղավ,
Ծեզրն ընձի յար չեղավ:

Դանակը բողկից ելավ,
Իմ յարը պողկից ելավ:

Միրել եմ, սալդաս է,
Ամուշ լիզուն բաղդաս է:

Կայճա քարին դուշ եղա,
Անտեր չոփին դուշ եղա,
Կորցրել եմ քառանս,
Կաճչի, մալամիշ եղա:

Հանդր նասել եմ քարին,
Նամակ գրեմ իմ յարին,
Օր կարդա ու որիսընա,
Մինչև կատարվի քարին:

Միայն պարտներում, հարսանիքների ժամանակ չեն, որ ստեղծվում ու կատարվում էին մանիներ: Դրանք ծանր աշխատանքից հոգմած զյուղացուն սրափեցնում և մի պահ կտրում էին առօրյա հոգսերից իրենց երգով ու պարով: Բազմիցս ականատես ենք նդեւ, քեզ ինչպիսի քարմություն եր բերում երգը հոգմատանց զյուղացու աշխերին.

Անձրև էկավ՝ հով կեմեն,
Կարկուտն էկավ՝ սով կեմեն,
Ջաղքցի աղջիկ եմ ես,
Հնձի գեղ տեղ մի՛ տանի:

Ջաղքեն էկամ սելերը,
Կապեն շովկուս թելերը,
Ջաղքեն էկամ՝ լսմայր կատ,
Ջինսը հարցու՝ աղջիկն առ:

<i>Սերս ընծի բերել է, Սիպտակ բալու էրել է:</i>	<i>Սերս ընծի բերել է, Սիպտակ բալու էրել է:</i>
<i>Քյաշկա բալու մեռնեի, Սորս մրտից ելնեի:</i>	<i>Սերս կերավ կծու սոխ, Ընծի բերավ խաղ ըստ:</i>
<i>Խնձոր քցի ֆոֆոաց, Թուշդի խաճի մրմոաց:</i>	<i>Լուսնակ զիշեր դուրս եղա, Լուսնակն անուշ կցոլա:</i>

*Բարակ առուն ջուր գուկա,
Աղջիկ սոխ դուր գուկա:*

Բանասաց Ուոզա Գևորգյանը մի դրվագ պատմեց իր կյանքից. «Սեր գեղի Մխակի Սերոժը ընծի կսիրեր, բայց հորդս վրա առաջին մատերյալ գրողը Սերոժի հերն էր, հազար տարի անցնիլու, ես ըրդը չէի առնի: Իմ անընիս աղջիկ առավ, օր միշտ Ուոզա ճվար: Ընծի էլ նշանին, տվին Հովհաննեսին: Հովհաննեսն էլ պատերազմի վախտը կարտող էր տեղափոխել, պակտող էր տվել, բռնել էիմ: Ինքը բանտը՝ ընծի նշանին: Սերոժն էլ բռնակ կնկան, յուղ չգնաց հետքը: Սե անգամ պարտուն էիմ տարել ընծի. Բազա հարս էի: Սերոժն էլ էր ըրեղ: Խաղ ըստին խրատ տվավ, էն էլ երգեց.

- *Սարից իջավլ ուռավողը,
Աղջի մարդր բռնավոր:*
- Արփենը զգաց, օր ընծի կսե, պատասխան տվավ.*
- *Ուսի ծառը բար չունի,
Օրբերին յար չունի»:*

Խաղերի մեջ անդրադարձված իրականությունը զյուլաշխարհն է՝ գրեթե բոլոր բնորոշ կողմերով: Խաղերն ընդգրկել են հեղինակների առօրյան ու միջավայրը, աշխատանքային գործունեությունը, զյուղացուն շրջապատող բնությունը:

Հայ երգային բանահյուսությունը հարուստ է ու բազմարուվանդակ: Երգաշարերի մեջ թեմատիկ հատկանիշների հիման վրա խմբավորված երգերը կարծես վերածվում են աշխատավոր մարդուն ծոնված պոեմի:

ЛИРИЧЕСКИЙ ФОЛЬКЛОР с. ВАГРАМАБЕРД

— *Резюме* —

— *А. Галстян* —

Творческая фантазия армянского крестьянина богатая, песни сопровождали его повсюду. И сегодня в песенном фольклоре большое место занимают лирические песни, которые называются *мани* (частушки). С целью сбора и сохранения песен этого жанра, мы записали около 100 мани в селе Ваграмаберд. Характерным для этих песен является богатство тематики (светлая любовь, грусть, забавные шутки и т.д.), а также выразительность их содержания.